ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1958 Общественные науки

Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան

ՆՈՐ-ԱՐԵՇԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿՈԼՈՒՄԲԱՐԻՆ

1957 թ. հուլիսի սկզբին, Երևան քաղաքի հարավային ծայրամասի Նոր-Արեշ ավանում անցկացվող հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվեց ուրարտական ժամանակաշրջանի սքանչելի հուշարձաններից մեկը։ Նորահայտ հուշարձանը գտնվում է «Լենուղի» կոլտնտեսության ֆերմաների ու այժմյան գերեզմանատան միջև և ներկայացնում է իրենից ցածրիկ ձվաձև մի բլուր, որի արևելյան մասում գտնվում է հիշյալ գերեզմանատունը։

Աշխատանքներն սկսելու պահին բլուրի արևմտյան մասը փորված էր ավելի քան մեկ մետր խորությամբ և հարթված որպես կոլտնտեսության կալատեղ։ Գրեյդերները հսկայական ուժով հողի մակերես էին նետել աճյունասափորների և այլ ամանների խեցիներ, առանձին բրոնզե ապարանջաններ և նույնիսկ ամբողջական կարմիր անգոբապատ ամանիկներ։ Տեղ-տեղ, հողի մնացած բարակ շերտի տակից երևում էին բլուրի հիմքում ընկած տուֆային շերտերի մերկացած մասերը, իսկ որոշ տեղերում նկատվում էին փոքր օվալաձև բծեր աճյունի և մոխրի հետքերով։ Դրանք մեքենաների կողմից ավերված հնագույն թաղումների մնացորդներ էին։

Տեղանքի և նյութական կուլտուրայի մնացորդների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նորահայտ հուշարձանը կարող է լինել ն. մ. թ. 1-ին հազարամյակի 1-ին քառորդի ուրարտական կոլումբարի (դամբարանադաշտ), որտեղ թաղումը սովորաբար կատարվում էր ժայռերի ճեղքերում՝ հանգուցյալի աճյունը պարունակող կավե սափորների մեջ[1]։

Երեք, մասնակիորեն պահպանված դամբարանները մաքրելուց հետո այդ ենթադրությունը հաստատվեց։

Առաջին թաղումը պարունակում էր երկու սափոր, շրջապատված մանր քարերով։ Սև, փայլեցրած մեծ կճուճի մեջ գտնվեցին հսկայական քանակությամբ ուրարտական տիպի առաջնակարգ բրոնզե իրեր, իսկ կարմիր անգոբապատ սափորում՝ հանգուցյալի աճյունը։

Երկրորդ թաղումից պահպանվել էին կարմիր անգոբապատ աճյունասափորի ֆրագմենտներ և նրանց կողքին՝ բրոնզե իրեր։ Նույն տեղում կային մանր քարեր և դեղնավուն տուֆի մշակված մի կտոր, որը ժամանակին դրված է եղել աճյունասափորի բերանին։

Երրորդ համարյա հիմնովին ավերված դամբարանն ունի մի ուշագրավ դետալ՝ տափակ տուֆի մի փոքր սալաքար, որի կենտրոնում եղած փոսի մեջ պահպանվել էր ուրարտական տիպի կարմիր անգոբապատ սափորիկի հատակը։ Շուրջը փռված էին մասամբ կավով ծեփված մանր քարեր։

Այսպիսով, Նոր-Արեշի ուրարտական կոլումբարիի դամբարաններն իրենցից ներկայացնում են հանգուցյալի աճյունը պարունակող, ուրարտական տի-

[1] *Տե՛ս Б. А. Куфтин,* Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит. Вестн. Гос. муз. Грузин. т. XIII-B. Тбилиси, 1943, էջ 58։

պի կարմիր կավե սափորներ և տեղական արտադրության կավե ամաններ, որոնք պարունակում էին դամբարանային իրեր։ Այս սափորները դրվում էին փոսերի մեջ, որոնք, որպես կանոն, երեսապատվում էին մանր քարերով, բացի այդ, աճյունասափորները ծածկվում էին տուֆե սալաքարերով։

Ակնհայտ է, որ վերը նկարագրված թաղումները ընդհանուր ոչինչ չունեն քարարկղյա այն դամբարանների հետ, որոնք տարածված են Հայկական ՍՍՌ-ի տերիտորիայի վրա և պատկանելիս են եղել տեղաբնիկներին։ Նրանք տարբերվում են վերջիններից ոչ միայն կոնստրուկտիվ տվյալներով ու ինվենտարով, այլև թաղման արարողությամբ։ Միաժամանակ, նրանք միանգամայն համապատասխանում են Մալաքլուի ուրարտական դամբարանադաշտի թաղումներին սոսկ այն տարբերությամբ, որ առաջինների համար օգտագործված էին ժայռերի ճեղքերը և գետնի բնական փոսերը, իսկ երկրորդները փորված էին հողի մեջ։

Նշված թաղումների համար հավասարապես հատկանշական են դիակիզումը, աճյունի առկայությունը կարմիր անգոբապատ սափորներում, որոնք երբեմն գտնվում են տեղական արտադրության սափորների կողքին, ինչպես նաև ուրարտական արտադրության համար չափազանց բնորոշ նյութական կուլտուրայի հուշարձանները։

Նոր-Արեշի ուրարտական կոլումբարիից արևելք, երկու-երեք կիլոմետր հեռավորության վրա գտնվում է Էրեբունի ուրարտական հայտնի ամրոցը, ուր գտնված է արդեն վեց սեպագիր արձանագրություն, փորագրված VIII դ. (Ն. մ. թ.) ուրարտական Արգիշտի՝ Մենուայի որդի (786—764) և Սարդուրի՝ Արգիշտիի որդի (764—735) թագավորների անունից։

Նշված հուշարձանների ուրարտական ծագումը, նրանց միջև եղած աննշան հեռավորությունը, մոտակայքում ուրարտական այլ ամրոցների բացակայությունը, ինչպես նաև նրանց սինխրոնությունը, որը սահմանվում է մի կողմից՝ սեպագիր արձանագրությունների, մյուս կողմից՝ վերոհիշյալ երկու հարուստ դամբարանների պեղման շնորհիվ հայտնաբերված նյութական կուլտուրայի հուշարձանների անալիզի օգնությամբ, համոզում են մեզ նրանում, որ ուրարտական ամրոցն ու Նոր-Արեշի դամբարանադաշտը հնագիտական միևնույն հուշարձանի մասերն են։

Վերը մենք նշեցինք, որ Նոր-Արեշի առաջին դամբարանում կարմիր անգոբապատ սափորի կողքին կար նաև սև փայլեցրած կճուճ՝ ուրարտական արտադրության բրոնզե իրերով լցված։

Այդ կճուճից հանվել են՝ 12 կողավոր և հարթ ապարանջաններ զոոմորֆ գլխիկներով, նախշված բրոնզե վզնոց, բրոնզե նուրբ ունելի, զոոմորֆ ձևավորումով գայլիկոնած գնդասեղ, կենտրոնական անցք ունեցող մուրճաձև առարկաներ՝ մասսիվ շիգղեր, ինչ որ առարկայի բարակ գալարուն ունկ, երկաթյա քառանիստ փոքր նետասլաք, ուրարտական կնիքներ, բազմատեսակ հուլունքներ՝ ագատից, սարդիոնից և պաստայից, ինչ որ բրոնզե առարկայի ճզմված, մեկը մյուսին կպած թերթեր։

Բոլոր այս առարկաները կրում էին կրակի ուժեղ ներգործության հետքեր, իսկ հուլունքները բոլորովին կորցրել էին իրենց սովորական փայլը։ Դատելով շրջապատից՝ դիակիզումը կատարվել է հենց տեղում, իսկ տվյալ գերեզմանում գտնվել է ուրարտական մի ազդեցիկ աստիճանավորի աճյունը։ Այդ մա-

սին են վկայում վերը թվարկված, իրենց սեփականատիրոջ հետ միասին թաղված, իրերի քանակը և պատրաստման բարձր որակն ու ճաշակը։

Նա ունեցել է հրաշալի արդ ու զարդ։ Սինաքերիր, Սարգոն, Աշտուրբանիպալ և այդ դարաշրջանի մյուս թագավորների բարձրաքանդակների վրա ներկայացված ասուրական բարձրաստիճան պաշտոնավորների նման նա կրել է ձեռքերին և արմունկներից վեր օձագլուխ և այլ ձևերի ապարանջաններ։ Նրա վիզը զարդարված է եղել կիսաթանկագին քարերից պատրաստված զանազան ձևի ու գույնի հուլունքներից կազմված մանյակով և փայլուն վզնոցով, կրծքին կրել է մի մասսիվ կրծքասեղ, իսկ մեջքին՝ գեղեցիկ բրոնզե գոտի նուրբ պատկերներով։ Հոնքերը նա սարքելիս է եղել ունելիով, հագուստները, ըստ երևույթին, ունեցել են զմայլելի նախշեր և գործված են եղել թանկարժեք թելերից, իսկ նրան պատկանած բրոնզե կնիքներով մի ժամանակ կնքվել են գուցե էրեբունի ամրոցի հարուստ ամբարները։

Ինչպես տեսնում ենք, այս գերեզմանում գտնված իրերի հիման վրա բավական հեշտ է վերականգնել ուրարտական բարձրաստիճան պաշտոնյաների արտաքին տեսքը. նրանք աշխատել են ետ չմնալ ասուրական կոլեգաներից ոչ իրենց կատարված գործերով, ոչ էլ զգեստների ու զարդարանքի շքեղությամբ։

Այս իրերի նշանակությունը, սակայն, չի սպառվում նրանց կրողների արտաքին տեսքի վերականգնմամբ։ Նրանց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում որոշելու ժամանակաշրջանը և պարզելու Հին Արևելքի ու Կովկասի տարբեր շրջանների միջև եղած կուլտուրական փոխհարաբերությունները։ Հետաքրքրական է, օրինակ, որ այստեղ, ուրարտական ինվենտարի մեջ առաջին անգամ հանդիպում են աղեղնաձև շիգղեր խիստ ուռցված միջին մասով. լայն ասեղնակալով, վահանիկներով և թռչունների փոքր ֆիգուրներով, որոնք տեղավորված են աղեղի ուղիղ կենտրոնում (նկ. № 1)։ Այս իրերը պատկանում են ն. մ. թ.[1] VIII դարում արտադրված հին կորանյան շիգղերի տիպին։ Հին Կորանի շիգղերից մեկը (МАК, вып. VII, նկ. 53) ամենից ավելի է համապատասխանում Նորարեշյան նմուշներին։ Նրա ուռուցիկ աղեղն ունի վահանիկներ և նրանց վրա, ինչպես և աղեղի կենտրոնում, ձուլված են խոյի գլուխներ։ Սակայն Նոր-Արեշի թաղումից գտնված շիգղերը տարբերվում են վերը նշվածից ներքին պարույրի, ասեղնակալի կառուցվածքով և թռչունների ֆիգուրներով։ Մեզ թվում է, որ Նոր-Արեշի դամբարանադաշտի ուրարտական վարպետների կողմից հին կորանյանների օրինակով պատրաստ-



Նկ. 1. Բրոնզյա շիգղեր № 1 դամբարանից։

[1] *Е. П. Артамонова-Полтавцева*, Позднекобанская, культура центрального Кавказа, Уч. записки ЛГУ, сер. исторических наук, вып. 13, стр. 191.

ված այս շիգդերը հաստատում են կորանյան բրոնզների հնագույն խումբը Ն. մ. թ. VIII դարին վերագրելու իրավացիությունը։

Կովկասյան տիպի իրերի թվին են պատկանում նաև կիսագնդաձև բրոնզե կոճակները, մուրճիկաձև առարկաները, պաստայե հուլունքներից մի քանիսը և մի ամբողջ շարան մանր սարդիոնե հուլունքներ՝ գնդաձև, սկավառակաձև ու ձվաձև, երկկողմանի անցքով և ոչ այնքան լավ հղկվածքով։ Հավանական է, որ մոտ ապագայում հնարավորություն կստեղծվի որոշելու նաև մյուս՝ լավ հղկված, ագատե և սարդիոնե հուլունքների պատրաստման վայրը. սրանք ունեն գնդի, շեղանկյան, տակառիկի, գլանի ձև, նրանց անցքերը փորված են շտիֆտով միայն մի կողմից։ Առաջին դամբարանում հայտնաբերված մյուս բոլոր առարկաները պատկանում են ուրարտական կուլտուրային և համապատասխանաբար իրենց անալոգիաներն ունեն ուրարտական ամրոցների պեղման միջոցով ձեռք բերված նյութերի կոմպլեքսներում և Հին Արևելքի հուշարձանների մեջ։ Դրանցից ուշադրության արժանի են՝ ծայրերին երկու կանթ ունեցող բրոնզե կիսալուսնաձև վզնոցը ուրարտական մետաղյա առարկաներին բնորոշ զիգզագաձև և ուռուցիկ-կետավոր օրնամենտացիայով (աղ. № 1), մոմե մոդելով ձուլված բրոնզե գնդասեղը, որն ունի մի անցք գլխիկի հիմքի մոտ, հորիզոնական կտրվածքներ և ավարտվում է թռչունների շորս ֆիգուրներով և շատ հիշեցնում է Թեյշեբաինի[1] քաղաքի միջնաբերդից գտնված արծաթե գնդասեղը (աղ. № 2), կողավոր մակերեսով օձագլուխ ստանդարտ ապարանջանները, որոնց մեջ աչքի են ընկնում երկու հարթ ապարանջան օձերի մասսիվ գլուխներով։ Նրանց վրա հստակորեն դուրս են բերված աչքերը, հոնքավերևի աղեղները, ծնոտները և մյուս դետալները։ Արմունկային ապարանջաններից մեկը ծայրերից զարդարված է խոյերի գլխիկներով (աղ. № 2)։ Առանձին հետաքրքրություն են ներկայացնում բրոնզե ձուլածո կնիքները, որոնք լրացուցիչ մշակման են ենթարկված հղկիչով, հատիչով և մուրճով։ Նրանցից առաջինն իրենից ներկայացնում է ձիու գլխիկ՝ հիմնական դետալների ուրարտական արվեստին բնորոշ մեկնաբանմամբ։ Մեկ կամ ուղղահայաց նախշագծերով երիզված փոքր ինչ բարձր բաշն ու մաղափունջը զատվում են գնչից, որի վրա ռելեֆ կերպով տրված են այտերը, ծնոտները, աչքերն ու ռունգերը։ Բաշի հետևում կա օղակ՝ կախելու համար, սա կպած է կնիքի ներքին հարթությանը, որի վրա պատկերված են մի շարքով դասավորված երեք անգղ (աղ. № 1)։

Թեև ուրարտական մետաղագործները և քարագործ վարպետները աչքի էին ընկնում փորագրման, ձուլման և քանդակման միջոցով կենդանիներ պատկերելու գործում, այնուհանդերձ, ուրարտական կիրառական սարվեստի հուշարձանների մեջ զոոմորֆ կնիքներ շատ քիչ են հանդիպում։ Յուրիկ պատկերող մի քարե կնիք գտնվել է Հայկական ՍՍՌ Թալինի շրջանի Հակկո[2] գյուղի ուրարտական ժամանակաշրջանի դամբարանից, երկու փոքր ֆիգուր գտնվել են Կարմիր-բլուրում[3], իսկ վերը ներկայացված նորարեշյան կնիքը եզակի է իր տեսակի մեջ։ Անհրաժեշտ է նշել, որ մինչև նորարեշյան բրոնզե կնիքների հայտնաբերումը հայտնի է եղել միայն մեկ սյունաձև բրոնզե կնիք (Հայկա-

---

[1] Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, стр. 18, рис. 12.

[2] Նույն տեղում, II, էջ 23։

[3] Նույն տեղում, III, էջ 55, նկ. 17։



Աղյուսակ № 1. Առաջին գաժբարանում հայտնաբերված բրոնզյա իրեր։



Աղյուսակ № 2. Ուրարտական տիպի բրոնզյա ապարանջաններ և դնդասեղ։

կան ՍՍՌ ԳԱ Պետական Պատմական թանգարան. ինվ. 20 (105), որի կոզային հարթությունների վրա պատկերված են ձիու և թռչունի ոճավորված ֆիգուրներ, իսկ ստորին հարթության վրա նկատվում են սրբազան ծառի հազիվ պահպանված հետքեր։

Երկրորդ՝ կնիքը տարբերվում է կշռաքարի ձև ունեցող քարե կնիքներից (որոնք հսկայական քանակությամբ ներկայացված են Կարմիր-բլուրի միջնաբերդում) միայն վերին մասում՝ վնասված բռնակից ներքև, դասավորված հորիզոնական գծերով (աղ. № 1)։ Նրա ստորին հարթության վրա պատկեր-

ված է մի ամբողջ կրոնական տեսարան, որը հիշեցնում է Արմավիրի[1] ոսկե և Կարմիր-բլուրի[2] արծաթե մեդալյոնների սյուժեները, այն տարբերությամբ միայն, որ այստեղ այր աստվածության փոխարեն պատկերված է գահի վրա նստած կանացի աստվածություն, որի ձախ ձեռքում ճյուղ կա կարծես։ Նրա դիմաց, զոհասեղանի այն կողմը ներկայացված է տղամարդու կանգնած ֆիգուրա վեր պարզած թևով։ Զոհասեղանից վեր գտնվում է շրջանաձև մի առարկա, որն ըստ երևույթին, արևի խորհրդանիշն է։ Միանգամայն հնարավոր է, որ այս կնիքի վրա պատկերված է մայր աստվածուհին, արգասավորության խորհրդանշան հանդիսացող ճյուղը ձեռքին։ Որոշ ամբարների դռների վրա կնիքների այսպիսի բովանդակությամբ դրոշմվածքը միանգամայն կհամապատասխաներ Էրեբունի քաղաքի պալատական հարուստ ամբարների կոչմանը, որոնք սեպագիր արձանագրություններում անվանված են շտեմարաններ (Ari)։

Հայկական ՍՍՌ ԳԱ Պետական Պատմական թանգարանի ռեստավրատոր Վ. Ղազազյանին հաջողվեց փրկել և վերականգնել ուրարտական կիրառական արվեստի հրաշալի հուշարձաններից մեկը՝ հարուստ պատկերներով բրոնզե գոտին։ Քանի որ նույնատիպ գոտու ֆրագմենտներ հայտնաբերվել են նաև կոլումբարիի երկրորդ դամբարանում, ապա գերադասելի է ուսումնասիրել դրանք համատեղ։

Նորարեշյան կոլումբարիի երկրորդ դամբարանը աչքի է ընկնում իրերի սակավաթվությամբ և, այնտեղից հայտնաբերված իրերից դատելով, պատկանել է ուրարտական ռազմիկի։ Նրա մեջ հայտնաբերվել են՝ օձագլուխ բրոնզե ապարանջան, ճզմված բրոնզե թաս (աղ. № 3), ինչ որ չպահպանված առարկայի հանգուցանման ֆրագմենտ, ուրարտական տիպի երկաթյա կեռ դանակի կոթ, տերևաձև գեղարդ ունեցող (աղ. № 3) նիզակի հսկայական ծայրապանակ և շարժական բերանոցներով բրոնզե սանձեր (աղ. № 3), որոնք ունեն կենտրոնական և կողային անցքեր, իսկ արտաքին կողմից՝ դուրս ցցված ծայրեր։ Կողային անցքերն արված են այտային թոկերի համար, իսկ կենտրոնականը՝ սանձի։ Բերանոցների և սանձի ծայրերը զարդարված են ոլորուն կտրվածքներով, վահանիկներով և գմբեթաձև գլխիկներով։ Նույնատիպ բրոնզե սանձ է հայտնաբերվել Թեյշեբաինի քաղաքի միջնաբերդի շինություններից մեկում, 1957 թ. պեղումների ժամանակ։ Այդպիսիք երբեմն պատկերվել են ասուրական բարձրաքանդակների վրա[3]։ Կարմիր-բլուրի իրերի մեջ իրենց բազմաթիվ անալոգիաներն ունեն Նոր-Արեշի ուրարտական դամբարանադաշտի մարտիկի դերեզմանի նաև մյուս առարկաները։

Այս ամենից բացի, նշված դամբարանում գտնվել է խիստ այրված և ջարդոտված բրոնզե գոտի։ Նրա ռեստավրացիայից հետո պարզ դարձավ, որ այն հանդիսանում է ուրարտական կուլտուրայի առաջնակարգ հուշարձան, որի վրա առաջին անգամ պատկերված է թագավորական որսի տեսարան հեծյալների և մարտակառքերի մասնակցությամբ։ Պահպանվել են հինգ հորիզոնական շերտերի մնացորդներ, ուր քանդակագրոշմված են թեթև տիպի մարտակառքեր երկուական զինվորով և առանձին հեծյալներ, որոնք հետապնդում են գլխից, փորից կամ մեջքից նետահարված վիրավոր առյուծների ու ցուլերի։ Նետերի

[1] *Lehmann-Haupt*, Armenien einst und jetzt.
[2] *Б. Б. Пиотровский*, Кармир-блур, III, рис. 14.
[3] *G. Perrot*, Chipiez, Histoirie de l'Art, II, 1884, Paris.



Աղյուսակ № 3. № 3 գամբարանում հայտնաբերված բրոնզյա իրեր։

ցցված կոթերն ունեն ընորոշ փետրավորում։ Գոտու բոլոր ֆիգուրները արտահայտում են սրընթաց շարժում և գործողություն։ Հեծյալներն ու մարտակառքերը սլանում են քառատրոփ, ուղիղ շարքերով։ Նույնպիսի արագությամբ փախչում կամ նրանց վրա են հարձակվում գազանները։ Մարտակառքի ռազմիկներից մեկը վարում է ձիերին։ Նրա ձեռքերում երեք զույգ սանձ կա։ Մյուսը ձգում է աղեղի լարը, և նետի ծայրն ուղղում մարտակառքի վրա հարձակվող առյուծի երախը։ Մյուս ֆրագմենտների վրա ներկայացված են արյունաշաղախ և գազազած առյուծներ, որոնք ջանում են թաթով բռնել մարտակառքը և զգալով հեծյալի հարձակումը, սպառնում են կիսաշրջված գլխով և կատաղի մռընչյունով (նկ. № 2)։ Նման տեսարաններ պատկերված են ասուրական պալատների սքանչելի բարձրաքանդակների վրա։ Բրիտանական թանգարանի կույնֆիկյան բարձրաքանդակներից մեկը կրկնում է այս տեսարանը համարյա բո-

Նկ. 2. № 2 դամբարանում հայտնաբերված գոտու ֆրագմենտներ։

լոր մանրամասնություններով (նկ. № 3)։ Նրա վրա պատկերված է ասուրական ծանր մարտակառք երեք զինվորներով և հարձակվող մի առյուծ, որի վրա նշան են բռնում աղեղնավորն ու նիզակակիրը[1]։ Բրիտանական թանգարանի մի այլ բարձրաքանդակի վրա պատկերված է արքայական մարտակառք, որի թափքի վրա գտնվում է ինքը՝ Աշուրբանիպալը, երեք զինվորների հետ։ Նրանցից երկուսը նիզակներով խոցում են հարձակվող գազանին[2]։

Ուսումնասիրվող գոտու վրա պատկերված մարտակառքերը չեն տարբերվում նրանցից, որոնք դրոշմված են Թելլերաինիի միջնաբերդից գտնված, Ն. մ. թ. VIII դ. ուրարտական թագավորների[3] արձանագրություններ ունեցող բրոնզե սաղավարտների ու կապարճների վրա և տիպոլոգիապես մոտենում են VIII—VII դդ. ասուրական մարտակառքերին։ Նրանք ունեն թեթևացրած թափք կամ ճաղավոր պատերով՝ վերին մասում նուրբ քանդակներով ծածկված, ուռուցիկ աղեղ և ութ ճաղային անիվներ։ Մարտակառքերի վրա գտնվող զինվորներն ու հեծյալներն ունեն սրածայր սաղավարտներ, նման Կարմիր-բլուրի պեղումների ժամանակ քանիցս գտնված սաղավարտներին։ Զինվորներից ոմանք ունեն երկար գանգուր մազեր, բայց, ի տարբերություն Սարդուրիի սաղավարտի վրա պատկերվածների, մորուք չունեն։ Ձիավորների, աղեղնավորների և հեծյալ զինվորների հագուստները տարբեր են։ Հեծյալներն ունեն երկար զգեստներ, զինված են նիզակներով, բայց վահաններ չունեն. աղեղնավորները, որպես կանոն, կրում են լայն գոտիներ, իսկ հեծյալների հագուստն աղատորեն իջնում է ցած։

---

[1] *G. R. Perrot*, Ch. Chipiez, նշվ. աշխ., էջ 277. նկ. 112։

[2] Նույն տեղում, էջ 695, նկ. 331։

[3] *Б. Б. Пиотровский*. Кармир-блур, III. 63 и сл.



Նկ. 3. Բրիտանական թանգարանի ասուրական քարձրաքանդակներից մեկը։

Մարտակառքերին լծված ձիերը և հեծյալների ձիերն ունեն թեթև լծասարք և ծածկոցներ մետաղե զարդարանքներով, նման պեղումների ժամանակ Կարմիր-բլուրում հայտնաբերվածներին։ Նրանց գլուխները զարդարված են մետաղյա զանգաձև և բրոնզե հովհարանման զարդերով, երկար պոչերին հանգույց է արված։

Դոտու երկու ծայրերին պատկերված են ստատիկ վիճակում կանգնած առյուծներ, որոնք դասավորված են մեկը մյուսի վրա ուղղաձիգ վիճակում (նկ. № 4)։

Նկ. 4. Դոտու վրա քանդակված առյուծներ։

Դոտու առանձին շերտերի ֆիգուրներն ուղղված են տարբեր կողմեր։ Երեք շերտերի վրա նրանք գնում են ձախից աջ, իսկ մյուս երկուսի վրա՝ հակառակ ուղղությամբ։ Պատկերված կերպարանքները դասավորված են ուղիղ, գեղեցիկ շարքերով, այն հաշվով, որ կենդանիների կերպարանքները գտնվեն հեծյալների ու մարտակառքերի միջև։ Մի խոսքով որսի ողջ տեսարանը բաղկացած է հեծյալ զինվորների կերպարանքներից, մարտակառքերից և հետապնդվող գազաններից, որոնք դասավորված են մեկը մյուսի տակ, առանձին շերտերի վրա (աղ. № 4)։



Աղյուսակ № 4. Ուրարտական քանդակազարդ բրոնզյա գոտի որսի տեսարանով, № 2 դաժբարանից։

Այս պատկերների գծագրման տեխնիկան չի տարբերվում նրանից, որն օգտագործվել է հարուստ պատկերներ և ն. մ. թ. VIII դարի թագավորների սեպագիր արձանագրություններ կրող սաղավարտների, վահանների, կապարճների ձևավորման ժամանակ։ Գոտու թիթեղը ձուլվում էր նախ անցկացնելով նրա վրա պատկերվող կերպարանքների կոպիտ կոնտուրը, այնուհետև արտաքին կողմից դրանք լրացուցիչ մշակման էին ենթարկվում հատիչով և քանդակադրոշմիչով, որոնք կերպարանքներին տալիս էին անհատական գծեր։ Ըստ որում մարտակառքերը, հեծյալները, ձիերը և կենդանիները պատկերված են հին արևելյան, ասուրական ոճով և կրկնում են ասուրական բարձրաքանդակների մանրամասնություններն անգամ։ Բայց այս ամենը դեռևս չի խոսում ուրարտական վարպետների կողմից ասուրական կուլտուրայի հուշարձանները կուրորեն ընդօրինակելու օգտին։ Այդպիսի տպավորություն կարելի է ստանալ Հին Արևելքի այդ երկու, տնտեսական և հասարակական զարգացման միևնույն աստիճանի վրա կանգնած հարևան և մրցակից պետությունների կուլտուրայի հուշարձանների և նյութական արտադրության նկատմամբ ձևական մոտեցում ունենալու դեպքում միայն։

Փոքր ինչ լուրջ ուսումնասիրության դեպքում այս հուշարձաններն ի հայտ են բերում շատ ավելի էական տարբերիչ հատկանիշներ, պայմանավորված լոկ ուրարտական կուլտուրային հատուկ ինքնատիպ գծերով։ Մեր գոտու, ինչպես նաև ուրարտական կերպարվեստի բոլոր հայտնի հուշարձանների վրա, ներկայացված են միայն թեթև մարտակառքեր, երկուական զինվորով՝ աղեղնավորով և նիզակակիր հեծյալով։ Մարտակառքի անձնակազմում բացակայում են վահանակիրները և մյուս զինվորները, մինչդեռ ասուրական բարձրաքանդակների վրա հանդիպում են ծանր մարտակառքեր երեք-չորս զինվորներով (աղեղնավոր, նիզակակիր, կառապան և զինակիր)։

Ուշադրության արժանի է և մի այլ դետալ։ Այս գոտու վրա պատկերված զինվորներից և ոչ մեկը մարտական վահան չունի, մինչդեռ ասուրական բարձրաքանդակների և ուրարտական կուլտուրայի մյուս հուշարձանների վրա պատկերված հեծյալները կրում են նաև կլոր մարտական վահաններ։ Խիստ ուշագրավ է այն, որ ասուրական բարձրաքանդակների վրա պատկերված նետերն ունեն նորարեշյան գոտու վրա ներկայացվածներից բոլորովին տարբեր վերտուրներ։

Կարելի է նշել ևս մի քանի տարբերիչ հանգամանքներ, սակայն, ասվածը միանգամայն համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Նոր-Արեշի դամբարանադաշտի գոտու պատկերների առանձնահատկությունները, որոնք աչքի են ընկնում ասուրական կուլտուրայի համանման հուշարձանների հետ համադրելիս, ամենևին էլ քանդակողների պատահական թերացումները չեն, այլ պայմանավորված են ուրարտական հեծելազորի կառուցվածքով, որսի և մարտական գործողություններ վարելու կանոններով, ինչպես նաև գոյություն ունեցող ուրարտական սպառազինության տեսակներով։

Ուսումնասիրվող դամբարանում գտնված գոտու վրայի թագավորական որսի համառոտ պատկերը լրացնում են առաջին դամբարանում գտնված համանման գոտու բազմաթիվ ֆրագմենտները, որոնք աչքի են ընկնում մոտիվների հարստությամբ և զանազանությամբ, կատարման բարձր վարպետությամբ։

Այս գոտու ֆրագմենտների ծայրերին պահպանվել են անցքեր, գոտու թի-

թեղը փափուկ հիմքին ամրացնելու համար։ Վերջավորությունները բաժանված են հինգ ուղղանկյուն վանդակների, որոնց մեջ ուղղահայաց ձևով տեղավորված են անհատական դիմագծերով օժտված առյուծների հրաշալի փորագրված ֆիգուրներ։ Յուրաքանչյուր այդպիսի վանդակին համապատասխանում է մեկ հորիզոնական շերտ որոշակի մոտիվներով։ Գոտին ունեցել է, այսպիսով, հինգ հորիզոնական շերտ, որոնցից ներքինը և վերինը լցված են ցուլերի ու առյուծների, հեծյալների և մարտակառքերի ֆիգուրներով (աղ. №№ 5—6)։

Ներքին շերտի առաջին բեկորի վրա պատկերված են փախչող վիրավոր ցուլ և սրածայր սաղավարտ ու փեշերին ծոպերիզ ունեցող երկար կաֆտան հագած հեծյալ զինվոր։ Նրա մեջքը զարդարում է լայն բրոնզե գոտի, երկար մազերը թափվում են ուսերին, իսկ պարզած աջ ձեռքում նիզակ կա (աղ. № 6)։

Երկրորդ համանման բեկորի վրա պահպանվել են պատկերված ձիու մարմնի մասերը և դունչը վնասված ցուլի ֆիգուրը։

Գոտու վերին շերտի երեք ֆրագմենտների վրա ներկայացված է մի քիչ այլ տեսարան։ Նրանցից առաջինի վրա, նետով խոցված ցուլի հետևում նկատվում են մի զույգ ձիերի գլուխներ, որոնք ըստ երևույթին, լծված են մարտակառքին (աղ. № 6)։ Երկրորդ բեկորի վրա պահպանվել են ցուլի ֆիգուր և առյուծի վեր ոլորած պոչ (աղ. № 6)։ Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում երրորդ ֆրագմենտը, մասնակիորեն պահպանված երկու առյուծների պատկերներով։ Նրանցից մեկը շրջվել և ճողոպրում է, մյուսը կանգնել է հետևի թաթերին և պատրաստվում է ամբողջ ուժով հարձակվել հակառակորդի վրա (աղ. № 6)։ Ամենայն հավանականությամբ, նրա առաջ պետք է գտնվեր ուրարտական թագավորի կերպարը, քանի որ նման հերոսությունները Հին Արևելքում վերագրվում էին գլխավորապես թագավորներին, որպեսզի հետագայում, քարի կամ բրոնզի վրա նրանք կարողանային փորագրել տալ իրենց սխրանքները, պատկերելով գազանին հետապնդելը, նրան ուժասպառ անելն ու սպանելը։ Ուսումնասիրվող ֆրագմենտը համարյա չի տարբերվում ասուրական այն բարձրաքանդակից, որը պատկերում է Աշուրբանիպալ թագավորի մենամարտը առյուծի հետ (նկ. № 5)։ Այս վերջինս կանգնած է հետևի թաթերի վրա, բաց է արել երախը և ատամները ցցած պատրաստվում է մեկ հարվածով վերջ տալ արքային։ Անվրդով Աշուրբանիպալը գազանի կուրծքն է խրում իր զորեղ զենքը, որն անցնում է նրա ամբողջ մարմնի միջով։

Այսպիսով, երկու շերտերից պահպանված աննշան ֆրագմենտները ներկայացնում են վայրի գազանների որսի կենդանի պատկերը. այն հիշեցնում է մի ամբողջ ճակատամարտ՝ մարտակառքերի, հեծյալների ու հետևակի մասնակցությամբ, հատուկ ռազմական խորամանկության և տակտիկայի որոշակի կանոնների կիրառմամբ։ Այս մարտը ղեկավարել է, անկասկած, ուրարտական թագավորը։

Գոտու մյուս շերտերի պատկերը լրացնում են թագավորական որսի տեսարանը, նրան հանդիսավորություն են տալիս, արտացոլում են որսի հետ կապված արարողություններն ու ծեսերը։

Երկրորդ (ցածից) շերտի վրա պատկերված է թագավորական գնդի հանդիսավոր երթը, որը տվյալ դեպքում կազմված է հեծյալ զինվորներից և հետիոտն նիզակակիրներից ու աղեղնավորներից։ Պահպանվել է հանդիսավոր երթով ընթացող ուրարտական զինվորների 11 ֆիգուր՝ զգեստների, հանդերձանքի ու սպառազինման ողջ փայլով։ Առջևից գնում են աղեղնավորները



Աղյուսակ № 8. № 1 գամբարանում հայտնաբերված գոտու բեկորներ



Աղյուսակ № 6. № 3 գամբարանում հայտնաբերված զուտու բեկորներ։

կարճ, փեշերին և գոտկատեղին ծոպերիզ ունեցող կաֆտաններով, որոնց մեջքներին լայն գոտի կա։ Բարձրացրած ձախ ձեռքում նրանք բոլորը աղեղ ունեն բռնած։ Աջ ձեռքը դրված է նետերով լի կապարճի վրա, որ կախված է աջ ուսից և իջնում է գոտկատեղից ցած (աղ. №№ 5—6)։ Այդպես են կրել Սարգոն թագավորի զենքը հանդիսավոր երթի ժամանակ նրա մերձավորները[1]։ Այդ աղեղնավորներն ունեն սրածայր սաղավարտներ, որոնց տակից թափվում են երկար մազերը։

Նկ. 5. Ասուրական ռելեֆ Աշուրբանիպալը որսի ժամանակ։

Աղեղնավորների հետևից գալիս են նիզակակիրները, նույնպիսի սաղավարտներով ու ծոպերիզով զարդարված հագուստներով, զինված, երկար նիզակներով ու կլոր վահաններով, որ կրում են աջ ուսին։ Այնուհետև գալիս են հեծյալ զինվորները երկար կաֆտաններով և սաղավարտներով, զինված ճիշտ այնպես, ինչպես հետիոտն նիզակակիրները։ Նրանց ձիերի արդուզարդն ավելի հարուստ է, քան առաջին գոտու վրա պատկերվածներինը։ Նրանք կրում են զարդարված ծածկոցներ՝ կուրծքը, վիզը և փորի առջևի մասը պաշտպանելու համար։ Գլուխներին ունեն զանազան զանգակաձև ու հովհարաձև զարդարանքներ։ Պոչերին հանգույց է արված։

Այսպես էր ընթանում ուրարտական թագավորական դունդը՝ բաղկացած թագավորի մերձավորներից, ազգականներից և վաստակավոր հրամանատարներից ու զինվորներից, արքայական մարտակառքի առաջնորդությամբ, որը չի պահպանվել մեր գոտու վրա։ Սինաքերիբի ժամանակի մի բարձրաքանդակի վրա (Բրիտանական թանգարան) պատկերված է արքայական դունդը հանդիսավոր երթի ժամանակ, այն շատ է հիշեցնում Նորարեշյան գոտու տեսարանը։ Արքայական մարտակառքին լծված են մի զույգ ուժեղ ձիեր, նրանք ունեն ծածկոց և թեթև լծասարք, ինչպիսիք պատկերված են ուսումնասիրվող

[1] Տե՛ս *Botta*, Flandin, Monument de Ninive, I, աղ. XIII, II աղ. 103 և 117։

ուրարտական գոտու վրա։ Տոնական մարտակառքի վրա կանգնած են Սինաքերիբը, կառապանը և ներքինին։ Մարտակառքի վրա կա գործվածքե լայն հովանոց, իսկ մյուս մարտակառքի հետևից գալիս են հետիոտն նիզակակիրների ու աղեղնավորների մի ջոկատ և հեծյալ զինվորներ, նույն կարգով, ինչ որ ուրարտացիները (նկ. № 6)։ Այս զինվորների հանդերձանքը, զրեստավորումը և սպառազինումը մոտ են նորարեշյան գոտու վրա պատկերվածներին, թերևս այն տարբերությամբ միայն, որ ասուրական զինվորների սրածայր սաղավարտներն ունեն և տականջակալներ, իսկ կարճ կաֆտանի վրայից նրանք կրում են մետաղյա թեփուկներով ծածկված ծանր զրահ, ինչպիսիք քանիցս հայտնաբերվել են ուրարտական Թեյշեբաինի քաղաքի միջնաբերդի շինություններում։

Նկ. 6. Սինաքերիբ թագավորի գունդը։

Դժվար չէ պատկերացնել ուրարտական արքայական գնդի հանգիստավոր երթը նեղ փողոցի երկայնքով ձգվող պատերի մեջ սեղմված և նրա մարտական կարգը բաց տարածության վրա։ Նման ջոկատներն ահեղ ուժ էին ներկայացնում ոչ միայն որսի ժամանակ, այլև ռազմի դաշտում։ Նորարեշյան ուրարտական դամբարանադաշտի բրոնզե գոտիների վրա ցույց են տրված ուրարտական զորքի համարյա բոլոր տեսակների ներկայացուցիչները։ Ծանր հետևակազորի ներկայացուցիչներն էին հանդիսանում նիզակով ու վահանով զինված ռազմիկները։ Նրանք մեծ դեր էին խաղում պաշտպանության մեջ։ Աղեղնավորները և, հավանական է, պարսատիկավորները կատարում էին գլխավոր դերը հարձակման ժամանակ։ Հետևակի այս երկու ձևը միաձույլ էին։

Նման կառուցվածք ուներ և մարտական հեծելազորը, որը բաղկացած էր հեծյալներից և մարտակառքերից։ Մարտակառքի վրա տեղավորվում էին աղեղնավորը և նիզակով զինված ձիավորը։ Հեծյալ զինվորները սպառազինված էին ծանր հետևակի նման։

Երրորդ (դածից) շերտի վրա պատկերված է եղել, ըստ երևույթին, զոհաբերության տեսարան (աղ. № 6)։ Ասուրական նյութերից մենք լավ գիտենք, որ

որսի ժամանակ սպանված կենդանիները նվիրարերվում էին ասուրական աստվածներին։ Զոհաբերությունը կատարվում էր հանդիսավոր պայմաններում, զինվորների, ծառաների, երաժիշտների և այլոց ներկայությամբ։ Նմանօրինակ տեսարան պատկերված է Աշուրբանիպալի բարձրաքանդակի վրա, որի շերտերի բաժանումը կատարված է նորարեշյան կոլումբարիի գոտիների սկզբունքով։ Հիշյալ բարձրաքանդակի վերին շերտի վրա պատկերված է Աշուրբանիպալի մենամարտը ծառս եղած առյուծի հետ, որ ներկայացված է և մեր գոտու վրա։ Այս և մյուս բարձրաքանդակների վրա եղած զոհաբերության տեսարանների հետ պատկերվում են սրբազան ծառեր և թևավոր աստվածներ։

Նկ. 7. Ասուրական ռելեֆ։

Ուսումնասիրվող նորարեշյան գոտու մի շերտի վրա պահպանվել են ֆանտաստիկ կենդանիների ֆիգուրներ և սրբազան ծառեր։ Ամենամեծ ֆրագմենտը պարունակում է սովորական ուրարտական տիպի երկու ոճավորված սրբազան ծառերի պատկեր դեպի վեր ուղղված պտուղներով, որպիսիք լայն կիրառում են գտել Մերձուրմյան շրջանից մինչև Մերձդնեպրյան շրջանը, ներառյալ Անդրկովկասն ու Հյուսիսային Կովկասը։ Առաջին ծառի մոտ կանգնած են ֆանտաստիկ կենդանիներ՝ թևավոր առյուծներ ձկան պոչով և գիշատիչ թռչունի գլխով (աղ. № 6)։ Հին արևելյան արվեստի հուշարձանները հարուստ են նման պատկերներով։ Նրանք հանդիպում են ասուրական պալատների սքանչելի բարձրաքանդակների (նկ. № 7)[1], իրանական Քուրդիստանի Սակկիզի գանձի մաննեական ոճով պատրաստված ոսկե իրերի վրա (նկ. № 8), սկյութական դաշույնների ոսկե պատյանների վրա՝ Կելերմեսի ու Լիտոյ կուրգանների և, վերջապես, ուրարտական կիրառական արվեստի նյութերի մեջ (նկ. № 9)։ Բոլոր այս պատկերներին բնորոշ են միանման դետալներ, իսկ նրանց էությունը կայանում է կենդանիների տարբեր մասերից մի ֆիգուր կազմելու մեջ։ Նման պատկերների տարածման աղբյուր էր հանդիսանում Ասորեստանի հետ միասին նաև Ուրարտուն, որտեղ այս պատկերները լրիվ կերպով պահպանել են իրենց իմաստային նշանակությունը և որտեղից նրանք թափանցել են հյուսիս, հյուսիս-արևմուտք և հյուսիս-արևելք։ Կարմիր-բլուրից այժմ հայտնի են երկու բրոնզե գոտի ուրարտական պանթեոնի գլխավոր աստվածների՝ Խալդիի, Թեյշեբայինիի և մյուսների սքանչելի պատկերներով, նորարեշյան գոտու վրա ներկայացվածների տիպի ֆանտաստիկ կենդանիների և միանգամայն ոճա-

[1] *Perrot*, Chipiez, Նշվ. աշխ., էջ 583, նկ. 280։

Նկ. 8. Մակկիպի ոսկյա վզնոցի մի գնապ։

Նկ. 9. Կարմիր-բլուրում հայտնաբերված բրոնզե դոդի։

վորված սրբազան ծառերի հետ միասին։ Ֆանտաստիկ կենդանիների այդպիսի ֆիգուրներ ուրարտական վարպետները կտրել են նաև ոսկորից։

Վերը մենք նշեցինք, որ ասուրա-ուրարտական կուլտուրայի փոխհարաբերությունները պայմանավորված են եղել այդ երկրների կուլտուր-տնտեսական զարգացման միևնույն մակարդակով։ Մյուս հարևան շրջանների մասին այդ նույնն ասել չի կարելի։ Ուրարտուի հնագիտությանը վերաբերող գրակա-

նության մեջ քանիցս նշվել է, որ Լիտոյ և Կելերմեսյան կուրգանների սկյութական իրերի վրա եղած հին արևելյան պատկերները կորցրել են իրենց իմաստային նշանակությունը և վերածվել օրնամենտալ մոտիվների, իսկ Սակկիզի գանձի առարկաների մի մասը զուգակցում է իր մեջ հին արևելյան ոճը սկյութականի հետ։ Սա ցույց է տալիս, որ նշված ցեղերը գտնվում էին ավելի ցածր կուլտուրական մակարդակի վրա և համապատասխան ժողովուրդների գաղափարախոսության ու կրոնի հետ սերտորեն կապված հին արևելյան սյուժեները նրանց կողմից վերարտադրվել են մեխանիկորեն, այն էլ ոչ թե ուղղակի ճանապարհով, այլ Ուրարտուի միջոցով, քանի որ նշած ժամանակաշրջանում (VIII—VII դդ. Ն. մ. թ.) «սկյութները սերտորեն կապված էին Հայաստանի ուրարտական վարչական կենտրոնների հետ»[1]։ Նոր-Արեշի ուրարտական դամբարանադաշտից գտնված իրերը լրացնում են նախկին հետազոտությունները և ավելի են ընդգծում այն նշանակությունը, որ ունեցել է Ուրարտուի կուլտուրան Ն. մ. թ. 1-ին հազարամյակում Մերձուրմյան շրջաններում, Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում ու Մերձդնեպրյան շրջաններում ապրող բնիկ ցեղերի նյութական արտադրության զարգացման մեջ։ Ուսումնասիրվող գոտու մյուս ֆրագմենտների վրայի թևավոր աստվածների պատկերներն իրենց անալոգիաներն ունեն ասուրական և ուրմիական նյութերում։ Այդ բեկորներից մեկի վրա ներկայացված է սրբազան ծառի առաջ կանգնած թևավոր առյուծ կանացի տորսով (աղ. № 6)։ Համանման ֆիգուր պատկերված է Սակկիզի գանձի ոսկե վզնոցի վրա (նկ. № 10), ինչպես նաև Աշուրբանիպալի ժամանակաշրջանի մի բարձրաքանդակի վրա (նկ. № 11)։ Հիշված տիպի թևավոր աստվածության ոսկրյա ֆիգուր գտնվել է Կարմիր-բլուրի պեղումների ժամանակ 1955 թվականին։ Հին արևելյան քաղաքակիրթ շրջանների հետ Ուրարտուի ունեցած կապերն անկասկած եղել են ավելի քան լայն և նոր հայտնաբերվող հուշարձանների հետագա ուսումնասիրության ընթացքում հնարավորություն կներկայանա բացատրել օտար միջավայրի մեջ հին արևելյան կուլտուրայի ներթափանցման ավելի կոնկրետ ճանապարհը։ Նոր-Արեշի ուրարտական դամբարանադաշտի նյութերը փայլուն կերպով իլյուստրացիայի են ենթարկում Ուրարտուի, որպես հին արևելյան կուլտուրան տարածողի դերը, նրա հսկայական ազդեցությունը հարևան ցեղերի կուլտուրայի վրա, ցեղեր, որոնք գտնվում էին նախնադարյան համայնական կարգերի քայքայման և Անդրկովկասի նոր ժողովուրդների ձևավորման աստիճանում, որոնց կուլտուրան կարող էր շարունակել իր զարգացումը հին արևելյան, ուրարտական կուլտուրայի հիման վրա։ Ուրարտական պետության կյանքի տարբեր կողմերը լուսաբանող գրավոր աղբյուրների բացակայության պայմաններում Նոր-Արեշի դամբարանների պեղումները հանդիսացան սկզբնաղբյուր ուրարտական նվաճողների կյանքի առանձին մոմենտները և թաղման ծեսը ուսումնասիրելու համար։ Մեր բրոնզե գոտիների բարձրարվեստ պատկերները լավագույն ձևով իլյուստրացիայի են ենթարկում ուրարտական տիրակալների և բարձրաստիճան պաշտոնյաների կենցաղը, որոնք արշավանքներից ազատ պահին զվարճանում էին որսով։ Պարզ է, այդ զվարճությունն այնքան էլ էժան բավականություն չէր։ Պետք է ենթադրել, որ արքայական մարտական ջոկատի հետևից գալիս են եղել ծառաներ՝ շների ոհ-

[1] Б. Б. Пиотровский, Նշվ. աշխ., էջ 150, 152։

Նկ. 10. Սակկիզի ոսկյա իրերից մեկի դետալ։

Նկ. 11. Ասուրական բարձրաքանդակ։

մակներով, ուտելեղենով բարձված գրաստներ, ինչպես այդ եղել է Ասորեստանում։

Հնարավոր է, որ վայրի գազանների համար պատրաստվել են փարախներ, ուր նրանց կերակրելու նպատակով պահվել են մանր անասունների հոտեր։ Նոր-Արեշի ուրարտական դամբարանադաշտի պեղումներից հետո պարզվում է, որ վայրի գազանների որսն ուղեկցվել է զոհաբերության ու հեղման ծեսերով և ավարտվել է բրոնզե իրերի վրա ուրարտական թագավորների նոր հերոսությունները պատկերելով։ Դրանց հավանաբար կցվել են ուրարտական թագա-

վորների «քաջագործությունները» սերունդներին պատմող արձանագրություններ։

Նման պատկերներ հայտնաբերված են այսօր ուրարտական պետության ներկայացուցիչներին պատկանած Նորարեշյան բրոնզե գոտիների վրա։ Մոտ ապագայում այդպիսիք կհայտնաբերվեն, անկասկած, Հայաստանի ուրարտական բերդերի պատերի վրայի ֆրեսկաների ձևով, որոնց ուսումնասիրությունը օրակարգի հարց է դառել։ Համենայն դեպս, ռուսական հնագիտական արշավախմբի Արևմտյան Հայաստանում կատարած աշխատանքների ժամանակ, Հ. Ա. Օրբելուն հաջողվել է հայտնաբերել ուրարտական պալատի երեսապատման մարմարե սալաքարեր ֆանտաստիկ կենդանիների պատկերների ֆրագմենտներով, նման Նորարեշյան գոտիների վրա ներկայացվածներին։

Չնայած ամրոցներում և, մասնավորապես, Կարմիր-բլուրի միջնաբերդի շինություններում գտնված ուրարտական հնագիտական նյութերի առատությանը, ուրարտական դամբարանների պեղումներն, այնուամենայնիվ, տալիս են յուրատեսակ նյութ, որը զգալի չափով լրացնում է մեր գիտելիքները Ուրարտուի կուլտուրայի մասին։ Սրանից հետևում է, որ ուրարտական բերդերի ուսումնասիրման հետ մեկտեղ մենք պետք է ուսումնասիրենք նաև նրանց հետ կապված դամբարանադաշտերը, որոնք հանդիսանում են վաղ հայկական կուլտուրայի զարգացման համար ամուր հիմք ստեղծած ուրարտացիների հոգևոր կյանքի համար վկաներ։